

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱ ՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2147-Ն/2

ք. Երևան

27.12.2021 թ

Հայաստանի Հանրապետության որոշության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետև նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Խ. Հարությունյանի (այսուհետև կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2147-Ն որոշումը (այսուհետև որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև պայմանագիր) հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման համար «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրել՝ 98 401 200 /իննսունույթ միլիոն չորս հարյուր մեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումար /ներառյալ ԱԱՀ/, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետև՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում:

#### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակի՝ չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում).

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարել համաձայն NN 2-8 հավելվածներով հաստատված տեխնիկական բնութագրերի.

2.4.4. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքների ավարտից, իսկ փուլային աշխատանքների դեպքում՝ փուլի ավարտից հետո 20-օրյա ժամկետում նախարարություն ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ կցելով նաև հանձնման-ընդունման և կատարողական ակտերի պատճենները, աշխատանքների կատարման վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին

համապատասխան, իսկ գնման գործընթացի արդյունքում տնտեսված գումարը վերադարձնել  
ՀՀ պետական բյուջե:

### **3. Մոնիթորինգը**

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

### **4. Վճարման կարգը և ժամկետները**

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2147-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

### **5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

### **6. Պայմանագրի գործողության ժամկետը**

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ը՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

### **7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, վրատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. Եզրօրինակից դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

#### Նախարարություն

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
Կառավարական տուն N 2  
«ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011039378, 900011039311,  
900011039329, 900011039337,  
900011039345, 900011039352,  
900011039360  
ՀՎՀՀ 02698732

#### Կազմակերպություն

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ  
ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3  
«ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900018001785  
ՀՎՀՀ 02511444  
Էլ. 010 52-66-18

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի  
պարտականությունները կատարող

Վ. Գասպարյան  
(ստորագրություն)



Կ.Տ



Խ. Հարությունյան  
(ստորագրություն)

Կ.Տ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառումներ						
անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	աշխատանքների կատարման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	<p>&lt;&lt; Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի պարսպապատի հարավ-արևմտյան հատվածին և նրկորդ բարձրից հարող հատվածների պեղումներ</p>	<p>Հուշարձանների ամրամասնում, նորոգման, վերականգնման, պեղման, գիտանախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները իրականացվում են համաձայն սույն Պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի</p>	<p>Պեղման աշխատանքներ</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>18 001 200 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>
<p>Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում</p>	<p>&lt;&lt; Լոռու մարզի Քաղաքատեղի Լոռի Բերդի միջնաբերդի պարիսպների ամրակայման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի մշակում</p>	<p>գիտանախագծային փաստաթղթեր</p>	<p>Գիտանախագծային փաստաթղթեր</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>12 000 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>
				<p>Գիտանախագծային փաստաթղթեր</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>6 000 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>

	<p>Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում</p>	<p>փաստաթղթերի մշակում</p>	<p>Հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, պեղման, գիտնախազգային փաստաթղթերի մշակման աշխատանքները կազմակերպվում են «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով</p>	<p>Գիտնախազգային փաստաթղթեր</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>12 000 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>
	<p>ՀՀ Լոռու մարզի Քաղաքատեղի Լոռի Բերրի միջնաբերդի բաղնիքների ամրակայման և մասնակի վերականգնման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>ՀՀ Լոռու մարզի Ամրակից գյուղի Ռուսական եկեղեցու ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>ՀՀ Լոռու մարզի «Սրվեր» վանական համալիրի ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>Գիտնախազգային փաստաթղթեր</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>12 000 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>
	<p>ՀՀ Տավուշի մարզի «Սրվեր» վանական համալիրի ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>ՀՀ Տավուշի մարզի «Սրվեր» վանական համալիրի ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>ՀՀ Տավուշի մարզի «Սրվեր» վանական համալիրի ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտնախազգային փաստաթղթերի մշակում</p>	<p>Գիտնախազգային փաստաթղթեր</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>14 400 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>
	<p>ՀՀ Տավուշի մարզի «Տավուշ» ամրոցի պարիսպների կից</p>			<p>Գիտնախազգային փաստաթղթեր</p>	<p>30.09.2022 թ.</p>	<p>20.10.2022թ.</p>	<p>24 000 000 /ներառյալ՝ ԱԱՀ/</p>

	կատույցների, եկեղեցու ամրակայան, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի մշակում					98 401 200 /ներառյալ՝ ԱԱՀ/
Ընդհանուրը՝						


**Նախարարություն**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
 Կառավարական 2 շենք

ՀՀ ԳԾ Գրիմանյան պալատի գրասենյակ  
 Հ/Հ 900011039337, 900011039338, 900011039311,  
 900011039329, 900011039337, 900011039345, 900011039352,  
 900011039360  
 Հ/Հ 02698732

Գլխավոր բարտուղարի  
 պարտականությունները կատարող՝

*(Ստորագրություն)*  
 Վ. Գանգարյան



Կ.Տ

**Կազմակերպություն**

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»  
 ՊՈԱԿ

ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3  
 ՀՀ ԳԾ Գրիմանյան պալատի գրասենյակ  
 Հ/Հ 900018001785  
 Հ/Հ 02511444  
 Հեռ.՝ 010 52-66-18

Տնօրեն՝

*(Ստորագրություն)*  
 Խ. Հարությունյան


Կ.Տ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՐԱՊԱՊՏԻ ՀԱՐԱՎ-ԱՐԼԱՆՄԱՆ ՀԱՏՎԾԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԲԱՂՆԻՔԻՆ ՀԱՐՈՂ ՀԱՏՎԾՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**


Ծառայության		Մատուցման	
Տեխնիկական բնութագիրը		հասցեն	ժամկետը
Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի բերդ ամրոցի պարսպապատի հարավ-արևմտյան հատվածին և երկրորդ բաղնիքին նախնական հատվածների պեղումներ պարսպապատի հարավ-արևմտյան հատվածի վերին մակերեսի, ներքին ճակատի չպեղված հատվածի մոտ 4 մ երկարությամբ պարագծով, երկրորդ բաղնիքի պարագծով՝ մոտ 3 մ: Անհրաժեշտության դեպքում նաև՝ պարսպապատի արտաքին խանրակի, եկեղեցու և առաջին բաղնիքի փլվածքների կամ այլ մաքրման հողային աշխատանքներ	ՀՀ Լոռու մարզ Լոռի բերդ համայնք	համապատասխան պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թ. սեպտեմբերի 30

**Նախարարություն**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
 Կառավարական 2 շենք  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 ՀՀ 900011039378  
 ՀՎՀՀ 02698732  
 Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող  
 Վ. Գրսպարյան  
 (ստորագրություն)  


Կ.Տ

**Կազմակերպություն**

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»  
 ՊՈԱԿ  
 ք. Երևան, Փ. Բուզանի փող. թիվ 1/3  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 ՀՀ 900018001785  
 ՀՎՀՀ 02511444  
 Հեռ.՝ 010 52-66-18  
 Տնօրեն՝  
  
 Խ. Հարությունյան  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

Կ.Տ

Հավելված N 3  
 2021 թ. դեկտեմբերի 28-ին  
 կնքված N 2147-Ն/2 պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԼՈՒԻ ԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՊԱՐԻՄՊԼԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԱԳՆՄԱՆ ԳԻՏԱՆԱԿԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ**

		Մատուցման	
		հասցեն	Ժամկետը
	<b>Տեխնիկական բնութագիրը</b>		
Նախագծերի պատրաստում ձախսերի գնահատում	<p>ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի միջնաբերդի պարիսպների հարավ-արևմտյան հատվածի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի պատրաստման, ձախսերի գնահատման ծառայությունների մատուցում՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջներ):</p>	<p>ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք</p>	<p>համապատասխան պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թ. սեպտեմբերի 30</p>

ՔՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱԿԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԳՆՄԱՆ ԳԻՏԱՆԱԿԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

	<p>Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝</p> <p>ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.</p> <p>բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները.</p> <p>գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը.</p> <p>դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացվում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.</p> <p><b>Մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը պարտադիր են լրանշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների</b></p>		
--	--	--	--

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՊԱՐԻՄՊՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՊՆԱՆ ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿԱՄԱՆ

Գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջները

Նախատեսվող աշխատանքի անվանումը	Ծառայության համառոտ նկարագրությունը	Որակական	Համաձայնեցում	Փաստաթղթերի մակիշը	Այլ
Մատենագրական, արխիվային և իտահետազոտական լղբյուրներից նյութերի հավաքագրում	Ծանոթանալ նախկին ուսումնախրությունների նախագծային փաստաթղթերի հետ	Տեղագրական, պատմական, ճարտարապետական (ինտիրների լուսաբանմանը նպաստող), ուսումնախրությունների և տեղեկությունների բացատրական նշումներ			
Վավերագրում	Պարիսպների, կից կառույցների և հուշարձանապատկան բեկորների ճարտարապետական չափագրություն, լուսանկարահանում, առկա քայքայումների և վնասվածքների նշում	Ընթեռնելի մասշտաբով, բոլոր չափերի և պայմանական նշանների տեղադրմամբ (գլխավոր հատակագիծ, կառույցների հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ, մանրամասեր)			
Եղագրական հանույթ	Տարածքի և մուտքման ճանապարհների տեղադրմամբ	Ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հորիզոնական 0.25 մ նիշերով, Մ 1:200	Չի պահանջվում	Գիրք 1՝ <b>Ելակետային նյութեր</b>	Արդյունքները ներկայացնել էլեկտրոնային 1 և թղթային 2 տարբերակով
Ելնիկական վիճակի սահն եզրակացություն ղիտողագործիքային հետազննությամբ	<ul style="list-style-type: none"> <li>Կառույցների թերությունների, կոնստրուկցիաներում դեֆորմացիաների և շեղումների չափումներ մեխանիկական</li> </ul>	Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009թ. դեկտեմբերի 8-ի N° 282-Ն հրամանի			

Ստորագրություն

	գործողության սարքերով	Երկրաբանական հետազոտություն՝ իրամասների և խուզահորանների միջոցով գրունտների, ապարների և վերգետնյա ժայռերի տեսակի և վիճակի նկարագրություն (տղանքներ, էրոզիա և այլն)	Եզրակացության տրամադրում	
Ճարտարագիտական հետազոտություն	<p>Նյութագիտական հետազոտություն՝ հուշարձանի կառույցների քարատեսակի (порода) և կապակցող նյութի (կրաշաղախ) քիմիական բաղադրության և ֆիզիկամեխանիկական հատկությունների լաբորատոր անալիզներ</p> <p>Առաջարկություն նախատեսվող քարի տեսակի, դրա հնարավոր հումքի աղբյուրի և կապակցող շաղախի բաղադրության վերաբերյալ</p>	Եզրակացության տրամադրում	Գիրք 2՝ <b>Էսքիզային նախագիծ</b>	Արդյունքները ներկայացնել այբուով՝ 2 օրինակ և էլեկտրոնային կրիչով՝ 1 օրինակ
Էսքիզային նախագիծ	<ul style="list-style-type: none"> <li>• Ընդհանուր բացատրագիր</li> <li>• Իրավիճակային հատակագիծ, տեղանքի լուսանկարներ</li> <li>• Գլխավոր հատակագիծ, տարածքի բարեկարգման ուղևագիծ</li> <li>• Հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ</li> <li>• Կոնստրուկտիվ լուծումներ և հանգույցներ ըստ անհրաժեշտության՝ տեխնիկական վիճակի մասին եզրակացության հիման վրա</li> <li>•• ճարտարապետական առանձին տարրերի մանրամասներ</li> <li>• ցուցարկային նյութեր</li> <li>•• Համալիր</li> </ul> <p>հետազոտությունների արդյունքների եզրակացություններ, դրանց հիման վրա ամրակայման հնարավոր</p>	գծագրական մասը՝ ընթերցելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հիմնավորումների հստակ ներկայացում	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այլ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)	

Նախագծային առաջադրանք	Տարբեր մեթոդների վերլուծությանը՝ խնդիրների լուծումների գիտական հիմնավորումներ /այդ թվում՝ լուծումների տնտեսական արդյունավետության/	Համաձայն ձևաթղթի	Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)		
-----------------------	--	------------------	--	--	--

**Աշխատանքային գծագրեր**


Նախարարության մաս /համաձայն աստատված էսքիզի/	Աշխատանքային գծագրերի նշակում, ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, գլխավոր հատակագիծ, աշխատանքների կազմակերպման հիմնարկություններ:	Ըստ նորմատիվ պահանջների գծագրական մասն ընթերցելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ).	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)	Գիրք 3՝ <b>Ճարտարապետական մաս</b>	ներկայացնել այբուով՝ 4 օրինակ, էլեկտրոնային կրիչով՝ 1 օրինակ, թողարկված, հայերեն և ռուսերեն լեզուներով
Շինարարության կազմակերպման նախագիծ	<b>Նախագծում ներառել պարիսպների հարավ-արևմտյան հատվածի պեղումների արդյունքներով հայտնաբերված կառույցների ամրակայման և տարածքի մասնակի բարեկարգման (մոտեցման քայլով) նախագիծ</b>	Համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ. հոկտեմբերի 12-ի № 128-Ն հրամանի			
Ուսումնական մաս /համաձայն աստատված էսքիզի	Շինարարության օրացուցային պլան՝ • նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ • ամիսների, շինարարական հրապարակի կազմակերպման պայմաններ և պահանջներ.	Ըստ նորմատիվ պահանջների գծագրական մասն ընթերցելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ).			

Սախահաշվային մաս	անհրաժեշտության դեպքում հնագետի հսկողությամբ տարածքի նաբրման աշխատանքներ՝ այդ թվում փլատակներից:	կազմել MicrosoftExcel ծրագրով, բանաձևերի կիրառմամբ, GHEAGrapalat տառատեսակով ըստ նորմատիվ պահանջների	2ի պահանջվում	Գիրք 4՝ Նախահաշվային մաս
------------------	--	--	---------------	-----------------------------

**Նախարարություն**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
 Կառավարական 2 շենք  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011039311  
 ՀՎՀՀ 02698732  
 Գլխավոր բարտուղարի  
 պարտականությունները կատարող՝


Կ.Տ. (ստորագրություն)  
 Վ. Գանձարյան



**Կազմակերպություն**

«Պատմաշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»  
 ՊՈԱԿ  
 ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900018001785  
 ՀՎՀՀ 02511444  
 Հեռ.՝ 010 52-66-18

Տնօրեն՝  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՔՆԱՄԱՆ ԳԻՏԱՆԱԽԱՓԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ**

		Մատուցման	
		հասցեն	ժամկետը
<b>Ծառայության</b>			
	<b>Տեխնիկական բնութագիրը</b>		
Նախագծերի պատրաստում ձախերի գնահատում	<p>ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի միջնաբերդի եկեղեցու նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի մասնակի բարեկարգման նախագծային փաստաթղթերի պատրաստման, ձախերի գնահատման ծառայությունների մատուցում՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջներ):</p> <p>Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝</p> <p>ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.</p> <p>բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները.</p> <p>գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման</p>	<p>ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնքի մասնապատասխան պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թ. սեպտեմբերի 30</p>	

ՄԱՐԶԻ ՄԵՐՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՔՆԱՄԱՆ ԳԻՏԱՆԱԽԱՓԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

	<p>օրացուցային ժամանակացույցը.</p> <p>դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացվում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.</p> <p><b>Մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը պարտադիր են լրամշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների</b></p>		
--	--	--	--

Գիտանախազգային և նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջները

Նախատեսվող աշխատանքի անվանումը	Ծառայության համառոտ նկարագրությունը	Որակական	Համաձայնեցում	Փաստաթղթերի մակնիշը	Այլ
Մատենագրական, արխիվային և հտառհետազոտական ղեկավարից նյութերի հավաքագրում	Ծանոթանալ նախկին ուսումնասիրությունների, նախազգային փաստաթղթերի հետ	Տեղագրական, պատմական, ճարտարապետական (խնդիրների լուսաբանմանը նպաստող), ուսումնասիրությունների և տեղեկությունների բացատրական նշումներ			
Վավերագրում	Կառույցների և հուշարձանապատկան բեկորների ճարտարապետական չափագրություն, լուսանկարահանում, առկա քայքայումների և վնասվածքների նշում	Ընթեռնելի մասշտաբով, բոլոր չափերի և պայմանական նշանների տեղադրմամբ (զխավոր հատակագիծ, կառույցների հատակագիծեր, ճակատներ, կտրվածքներ, մանրամասեր)			
Ղեկավարական հանույթ	Տարածքի և մոտեցման ճանապարհների տեղադրմամբ	Ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հորիզոնական 0,25 մ նիշերով, Մ 1:200	Չի պահանջվում	Գիրք 1՝ <b>Ելակետային նյութեր</b>	Աղյուսակներ Ը ներկայացնել էլեկտրոնային ն 1 և թղթային 2 տարբերակով Կ
Ինինիկական վիճակի սին եզրակացություն իտոլագործիքային հետազննությամբ	Կառույցների թերությունների, կոնստրուկցիաներում դեֆորմացիաների և շեղումների չափումներ մեխանիկական գործողության սարքերով	Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009թ. դեկտեմբերի 8 թ N 282-Ն հրամանի			
Ճարտարագիտական հետազոտություն	Երկրաբանական հետազոտություն՝ խրամատների և խուզահորանների միջոցով գրունտների, ապարների և վերգետնյա ժայռերի տեսակի և վիճակի նկարագրություն (տղանքներ, էրոզիա և այլն)	Եզրակացության տրամադրում			

<p>Ելքային նախագիծ</p>	<p>Նյութագիտական հետազոտություն՝ հուշարձանի կառույցների բարատեսակի (ретрография) և կապակցող նյութի (կրաշաղախ) քիմիական բաղադրության և ֆիզիկամեխանիկական հատկությունների լաբորատոր անալիզներ</p> <p>Առաջարկություն նախատեսվող քարի տեսակի, դրա հնարավոր հումքի աղբյուրի և կապակցող շարվախի բաղադրության վերաբերյալ</p>	<p>Եզրակացության տրամադրում</p>	<p>համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>	<p>Գիրք 2՝ <b>Էքզիզային նախագիծ</b></p>	<p>Արդյունքներ ը ներկայացնել այբով՝ 2 օրինակ և էլեկտրոնային ներկայացում օրինակ</p>
<p>Նախագծային առաջադրանք</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ընդհանուր բացատրագիր</li> <li>• Իրավիճակային հատակագիծ, տեղանքի լուսանկարներ</li> <li>• Գլխավոր հատակագիծ, տարածքի բարեկարգման ուղղագիծ</li> <li>• Հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ</li> <li>• Կոնստրուկտիվ լուծումներ և հանգույցներ ըստ անհրաժեշտության՝ տեխնիկական վիճակի մասին եզրակացության հիման վրա</li> <li>• ճարտարապետական առանձին տարրերի մանրամասներ</li> <li>• ցուցադրական նյութեր</li> <li>• Համալիր հետազոտությունների արդյունքների եզրակացություններ, դրանց հիման վրա ամրակայման հնարավոր տարրեր մեթոդների վերլուծությամբ՝ խնդիրների լուծումների գիտական հիմնավորումներ /այդ թվում՝ լուծումների տնտեսական արդյունավետության/</li> </ul>	<p>գծագրական մասը՝ ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հիմնավորումների հստակ ներկայացում</p>	<p>Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>	<p>Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>	<p>Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>
<p>Նախագծային առաջադրանք</p>	<p>Մշխատանքային գծագրեր</p>	<p>Համաձայն ձևաթղթի</p>	<p>Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>	<p>Գիրք 3՝ <b>Ճարտարապետական մաս</b></p>	<p>Ներկայացնել այբով՝ 4 օրինակ, էլեկտրոնային ներկայացում օրինակ</p>
<p>Ճարտարապետական մաս /համաձայն հաստատված էքզիզի/</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքային գծագրերի մշակում, ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, գլխավոր հատակագիծ, աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ:</li> <li>• <b>Նախագիծում ներառել էլեկտեցու, ամբողջական վերականգնման/վերակազմության և տարածքի մասնակի</b></li> </ul>	<p>Ըստ նորմատիվ պահանջների՝ գծագրական մասն ընթեռնելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ)։</p>	<p>համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)</p>	<p>Գիրք 3՝ <b>Ճարտարապետական մաս</b></p>	<p>Ներկայացնել այբով՝ 4 օրինակ, էլեկտրոնային ներկայացում օրինակ</p>

Շինարարության կազմակերպման նախագիծ	<p align="center"><b>բարեկարգման առաջարկ</b></p> <p>Շինարարության օրացուցային պլան՝ նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների, շինարարական հրապարակի կազմակերպման պայմաններ և պահանջներ, անհրաժեշտության դեպքում հնագետի հսկողությամբ տարածքի մաքրման աշխատանքներ՝ այդ թվում փլատակներից:</p>	<p>Համաձայն ՀՀ Կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ. հոկտեմբերի 12-ի N 128-Ն հրամանի</p> <p>Ըստ նորմատիվ պահանջների՝ գծագրական մասն ընթերցման մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ).</p>	<p>Քննարկում)</p>	<p>թողարկված, հայերեն և ռուսերեն լեզուներով</p>
Կոնստրուկտորական մաս /համաձայն հաստատված էսքիզի	<p>Ֆինանսական գնահատում ՀՀ դրամով</p>	<p>Կազմել Microsoft Excel ծրագրով, բանաձևերի կիրառմամբ, GHEA Grapalat տառատեսակով ըստ նորմատիվ պահանջների</p>	<p>2ի պահանջվում</p>	<p>Փիրք 4՝ նախահաշվայի</p>
Նախահաշվային մաս				


**Նախարարություն**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
 Բ. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
 Կառավարական 2 շենք  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011039329  
 ՀՎՀՀ 02698732



**Կազմակերպություն**

«Պատմաշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»  
 ՊՈԱԿ  
 Բ. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900018001785  
 ՀՎՀՀ 02511444  
 Հեռ.՝ 010 52-66-18  
 Տնօրեն՝



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՄԻՋՆԱՔԵՐԴԻ ԲԱՂՆԱՔԵՐԴԻ ԲԱՂՆԱՔԵՐԴԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ ԳԻՏԱՆԱԽԱԳՑՈՒՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

Ծառայության		Մատուցման	
		հասցեն	ժամկետը
